


Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2020թ. ապրիլի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2018 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետի պ/կ՝**




Տիգրան Գալստյան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

ՄԱՍԻՆ

2018

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը

և

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը,

ելնելով Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև առկա բարեկամական հարաբերություններից,

կամենալով ամրապնդել և խորացնել առկա բարեկամական հարաբերությունները գործընկերային ֆինանսական համագործակցության միջոցով,

գիտակցելով, որ այդ հարաբերությունների պահպանումը կազմում է սույն Համաձայնագրի հիմքը,

նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը,

վկայակոչելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության՝ 2018թ. ապրիլի 27-ի թիվ 053/2018 և 2018թ. նոյեմբերի 28-ին թիվ 169/2018թ. հայտագրերով ծանուցված հատկացումները,

համաձայնության եկան հետևյալի շուրջ.

Հոդված 1

(1) Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը կամ երկու Կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ ընդունող կողմերի հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից (ՎՎԲ) ստանալ հետևյալ գումարները.

1. մինչև 23 208 483,13 եվրոյի (բառերով՝ քսաներեք միլիոն երկու հարյուր ութ հազար չորս հարյուր ութսուներեք եվրո, տասներեք ցենտ) ֆինանսական աջակցություն՝ «Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում - Հայաստան» ծրագրին,

2. Ֆինանսական օժանդակություններ՝ հետևյալ ծրագրերի իրականացմանն ու աջակցմանն ուղղված անհրաժեշտ հարակից միջոցառումների համար.

ա) 2-րդ պարբերության 1-ին կետում նշված ծրագրի համար՝ մինչև 2 146 727,25 եվրո (բառերով՝ երկու միլիոն հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր քսանյոթ եվրո, քսանհինգ ցենտ),

բ) 2-րդ պարբերության 2-րդ կետում նշված ծրագրի համար՝ մինչև 375 000 եվրո (բառերով՝ երեք հարյուր յոթանասունհինգ հազար եվրո),

գ) 2-րդ պարբերության 3-րդ կետում նշված ծրագրի համար՝ մինչև 400 000 եվրո (բառերով՝ չորս հարյուր հազար եվրո):

(2) Բացի այդ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը կամ երկու Կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ վարկառուի հնարավորություն է ընձեռում ստանալ

1. «Վերականգնվող էներգիայի զարգացում» ծրագրի համար՝ Վերականգնման վարկերի բանկի կողմից հանրային զարգացման քաղաքականության շրջանակում արտոնյալ պայմաններով տրամադրվող՝ մինչև 20 000 000 եվրո (բառերով՝ քսան միլիոն եվրո) գումարի չափով տրվող արտոնյալ վարկ,

2. «Բնակարանային տարածքների ֆինանսավորում V» ծրագրի համար՝ Վերականգնման վարկերի բանկի կողմից հանրային զարգացման քաղաքականության շրջանակում արտոնյալ պայմաններով տրամադրվող՝ մինչև 20 000 000 եվրո (բառերով՝ քսան միլիոն եվրո) գումարի չափով տրվող արտոնյալ վարկ,

3. «Առևտրի խթանում Գերմանահայկական ֆոնդի միջոցով» ծրագրի համար՝ Վերականգնման վարկերի բանկի կողմից հանրային զարգացման քաղաքականության շրջանակում արտոնյալ պայմաններով տրամադրվող՝ մինչև 25 000 000 եվրո (բառերով՝ քսանհինգ միլիոն եվրո) գումարի չափով տրվող արտոնյալ վարկ,

Եթե ուսումնասիրության արդյունքում հաստատվի ծրագրերին օժանդակելու նպատակահարմարությունը. զարգացման քաղաքականության տեսանկյունից, եթե Հայաստանի Հանրապետությունը շարունակի պահպանել նախկին վարկային

հուսալիությունը, և եթե Հայաստանի Հանրապետության Կառավարությունը պետական երաշխիք տրամադրի այն դեպքում, եթե վարկառու ինքը կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը չեն: Ծրագրերը չեն կարող փոխարինվել այլ ծրագրերով:

(3) Եթե Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությունը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը ավելի ուշ ժամանակահատվածում հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից ստանալ լրացուցիչ վարկեր կամ ֆինանսական օժանդակություններ՝ 1-ին և 2-րդ պարբերություններում նշված ծրագրերի նախապատրաստման, կամ լրացուցիչ ֆինանսական օժանդակություններ՝ 1-ին և 2-րդ պարբերությունում նշված ծրագրերի իրականացման ու համակարգման համար անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար, ապա կիրառվում է սույն Համաձայնագիրը:

Հոդված 2

(1) 1-ին հոդվածում նշված գումարների օգտագործումը, այն պայմանները, որոնցով տրամադրվում են այդ գումարները, ինչպես նաև հանձնարարականներ տալու ընթացակարգը սահմանվում են Վերականգնման վարկերի բանկի և վարկեր կամ ֆինանսական օժանդակություններ ստացողների միջև կնքվող պայմանագրերով, որոնք ենթարկվում են Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենսդրությանը:

(2) 1-ին հոդվածի 1-ին պարբերության, 2-րդ կետի բ) և գ) ենթակետերի, ինչպես նաև 1-ին հոդվածի 2-րդ պարբերությունում նշված գումարների հատկացումը չի կատարվի, եթե հատկացման տարվան հաջորդող չորս տարիների ընթացքում չկնքվեն համապատասխան վարկային և ֆինանսական պայմանագրերը: Այս գումարների հատկացման համար սահմանված վերջնաժամկետը 2022թ. դեկտեմբերի 31-ն է: 1-ին հոդվածի 1-ին պարբերության 2-րդ կետի ա) ենթակետում նշված գումարի հատկացումը չի կատարվի, եթե համապատասխան վարկային և ֆինանսավորման պայմանագրերը կնքված չլինեն մինչև 2019թ. դեկտեմբերի 31-ը:

(3) Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, եթե վարկառու ինքը կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը չեն, երաշխավորում է

Վերականգնման վարկերի բանկի օգտին վճարումները եվրոյով՝ ի կատարումն 1-ին պարբերության համաձայն կնքվելիք պայմանագրերով վարկառուների ստանձնած պարտավորությունների:

(4) Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, եթե ֆինանսական օժանդակություններ ստացողը ինքը կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը չեն, Վերականգնման վարկերի բանկին տալիս է երաշխիք, որ կկատարվեն պարտքի վերադարձման այն պահանջները, որոնք կարող են բխել 1-ին պարբերության համաձայն կնքվելիք ֆինանսավորման պայմանագրերից:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության Կառավարությունն ստանձնում է Վերականգնման վարկերի բանկի կողմից վճարման ենթակա այն հարկերը, որոնք ծագում են 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման և իրականացման արդյունքում: 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման և իրականացման արդյունքում առաջացող ավելացված արժեքի հարկը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը: Բացի այդ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը վճարում է բոլոր այն պետական տուրքերը, որոնք ենթակա են վճարման Վերականգնման վարկերի բանկի կողմից:

Հոդված 4

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը վարկերի և ֆինանսական օժանդակությունների օգտագործումից անհրաժեշտաբար բխող՝ ծովային, ցամաքային և օդային ճանապարհներով անձերի և գույքի տեղափոխման համար ուղևորներին և առաքողներին տալիս է տրանսպորտային ձեռնարկության ազատ ընտրության հնարավորություն, չի ձեռնարկում միջոցներ, որոնք կբացառեն կամ կղժվարացնեն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող տրանսպորտային ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությունը, անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրում է պահանջվող թույլտվություններ տրանսպորտային հիշյալ ձեռնարկությունների մասնակցության համար:

Հոդված 5

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև 2015թ. հունիսի 16-ին կնքված «2014թ. Ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում նշված «Դպրոցների էներգասպառման արդյունավետությունը բարձրացնող վերանորոգում» ծրագրի համար նախատեսված հարակից միջոցառումը կվերածրագրավորվի 612 528,99 եվրո (բառերով՝ վեց հարյուր տասներկու հազար հինգ հարյուր քսանութ եվրո, իննսունինը ցենտ) գումարով: Այս գումարը կօգտագործվի 1-ին հոդվածի 1-ին պարբերության 2-րդ կետի ա) ենթակետում նշված «Վերականգնվող էներգիայի զարգացում» ծրագրի հարակից միջոցառման համար, եթե ուսումնասիրության արդյունքում հաստատվի այդ ծրագրին օժանդակելու նպատակահարմարությունը: Այնտեղ նշված գումարի չափը չի ավելանա:

Հոդված 6

(1) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի այն օրը, երբ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառավարությանը կձանուցի Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման ավարտի մասին: Հիմք կընդունվի ծանուցումն ստանալու օրը:

(2) Սույն Համաձայնագրի՝ Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 102-րդ հոդվածի գրանցումը կատարում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո: ՄԱԿ-ի քարտուղարության կողմից գրանցման հաստատումից անմիջապես հետո Համաձայնագրի մյուս կողմին ՄԱԿ-ում Համաձայնագրի գրանցման համարի փոխանցմամբ ծանուցվում է կատարված գրանցման մասին:

(3) Կողմերից յուրաքանչյուրը կարող է լուծել Համաձայնագիրը՝ մյուս Կողմին այդ մասին գրավոր ծանուցելով դիվանագիտական ուղիներով. Համաձայնագրի լուծումը սկսում է գործել մյուս Կողմում ծանուցման մուտքագրումից 30 (երեսուն) օր անց:

(4) Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել ցանկացած ժամանակ՝ Կողմերի միջև պայմանավորվածությամբ: Այսպիսի համաձայնություններն ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված կարգով:

(5) Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման շուրջ ծագող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

Կատարված է Երևան քաղաքում 2020թ. ապրիլի 7-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ գերմաներեն և հայերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝



Գերմանիայի Դաշնային
Հանրապետության Կառավարության
կողմից՝



Abkommen

zwischen

der Regierung der Republik Armenien

und

der Regierung der Bundesrepublik Deutschland

über

Finanzielle Zusammenarbeit

2018

Die Regierung der Republik Armenien
und
die Regierung der Bundesrepublik Deutschland -

im Geiste der bestehenden freundschaftlichen Beziehungen zwischen der Republik Armenien und der Bundesrepublik Deutschland,

in dem Wunsch, diese freundschaftlichen Beziehungen durch partnerschaftliche Finanzielle Zusammenarbeit zu festigen und zu vertiefen,

in dem Bewusstsein, dass die Aufrechterhaltung dieser Beziehungen die Grundlage dieses Abkommens ist,

in der Absicht, zur sozialen und wirtschaftlichen Entwicklung in der Republik Armenien beizutragen,

unter Bezugnahme auf die Zusage der Botschaft der Bundesrepublik Deutschland (Verbalnote Nr. 169/ 2018) vom 28. November 2018 -

sind wie folgt übereingekommen:

Artikel 1

(1) Die Regierung der Bundesrepublik Deutschland ermöglicht es der Regierung der Republik Armenien oder anderen, von beiden Regierungen gemeinsam auszuwählenden Empfängern, von der Kreditanstalt für Wiederaufbau (KfW) Finanzierungsbeiträge für notwendige Begleitmaßnahmen zur Durchführung und Betreuung der folgenden Vorhaben

zu erhalten:

1. für das in Absatz 2 Nummer 1 genannte Vorhaben bis zu 2 146 727,25 Euro (in Worten: zwei Millionen einhundertsechszwanzigtausend siebenhundertsebenundzwanzig Euro fünfundzwanzig Cent),
2. für das in Absatz 2 Nummer 2 genannte Vorhaben bis zu 375 000 Euro (in Worten: dreihundertfünfundsiebzigtausend Euro),
3. für das in Absatz 2 Nummer 3 genannte Vorhaben bis zu 400 000 Euro (in Worten: vierhunderttausend Euro).

(2) Die Regierung der Bundesrepublik Deutschland ermöglicht es der Regierung der Republik Armenien oder einem anderen von beiden Regierungen gemeinsam auszuwählenden Darlehensnehmer darüber hinaus

1. für das Vorhaben „Ausbau Erneuerbarer Energien“ ein vergünstigtes Darlehen der KfW, das im Rahmen der öffentlichen Entwicklungszusammenarbeit gewährt wird, in Höhe von bis zu 20 000 000 Euro (in Worten: zwanzig Millionen Euro),
2. für das Vorhaben „Wohnraumfinanzierung V“ ein vergünstigtes Darlehen der KfW, das im Rahmen der öffentlichen Entwicklungszusammenarbeit gewährt wird, in Höhe von bis zu 20 000 000 Euro (in Worten: zwanzig Millionen Euro) sowie
3. für das Vorhaben „Handelsförderung über den German Armenian Fund - GAF“ ein vergünstigtes Darlehen der KfW, das im Rahmen der öffentlichen Entwicklungszusammenarbeit gewährt wird, in Höhe von bis zu 25 000 000 Euro (in Worten: fünfundzwanzig Millionen Euro)

zu erhalten, wenn nach Prüfung die entwicklungspolitische Förderungswürdigkeit der Vorhaben festgestellt worden ist und die gute Kreditwürdigkeit der Republik Armenien weiterhin gegeben ist und die Regierung der Republik Armenien eine Staatsgarantie

gewährt, sofern sie beziehungsweise die Zentralbank der Republik Armenien nicht selbst-Kreditnehmer werden. Die Vorhaben können nicht durch andere Vorhaben ersetzt werden.

(3) Falls die Regierung der Bundesrepublik Deutschland es der Regierung der Republik Armenien zu einem späteren Zeitpunkt ermöglicht, weitere Darlehen oder Finanzierungsbeiträge zur Vorbereitung der in Absatz 2 genannten Vorhaben oder weitere Finanzierungsbeiträge für notwendige Begleitmaßnahmen zur Durchführung und Betreuung der in Absatz 2 genannten Vorhaben von der KfW zu erhalten, findet dieses Abkommen Anwendung.

Artikel 2

(1) Die Verwendung der in Artikel 1 genannten Beträge, die Bedingungen, zu denen sie zur Verfügung gestellt werden, sowie das Verfahren der Auftragsvergabe bestimmen die zwischen der KfW und den Empfängern der Darlehen und der Finanzierungsbeiträge zu schließenden Verträge, die den in der Bundesrepublik Deutschland geltenden Rechtsvorschriften unterliegen.

(2) Die Zusage der in Artikel 1 Absatz 1 Nummer 2 und 3 sowie in Artikel 1 Absatz 2 genannten Beträge entfällt, soweit nicht innerhalb von vier Jahren nach dem Zusagejahr die entsprechenden Darlehens- und Finanzierungsverträge geschlossen wurden. Für die Gewährung dieser Beträge endet die Frist mit Ablauf des 31. Dezember 2022.

Die Zusage des in Artikel 1 Absatz 1 Nummer 1 genannten Betrags entfällt, soweit die entsprechenden Darlehens- und Finanzierungsverträge nicht bis 31. Dezember 2019 geschlossen wurden.

(3) Die Regierung der Republik Armenien, soweit sie beziehungsweise die Zentralbank der Republik Armenien nicht selbst Darlehensnehmer sind, wird gegenüber der KfW alle Zahlungen in Euro in Erfüllung von Verbindlichkeiten der Darlehensnehmer aufgrund der nach Absatz 1 zu schließenden Verträge garantieren.

(4) Die Regierung der Republik Armenien, soweit sie beziehungsweise die Zentralbank der Republik Armenien nicht Empfänger der Finanzierungsbeiträge sind, wird etwaige Rückzahlungsansprüche, die aufgrund der nach Absatz 1 zu schließenden Finanzierungsverträge entstehen können, gegenüber der KfW garantieren.

Artikel 3

Die Regierung der Republik Armenien trägt die bei der KfW anfallenden Steuern, die im Zusammenhang mit dem Abschluss und der Durchführung der in Artikel 2 Absatz 1 genannten Verträge in der Republik Armenien erhoben werden. Die im Zusammenhang mit dem Abschluss und der Durchführung der in Artikel 2 Absatz 1 genannten Verträge erhobene Umsatzsteuer wird von der Regierung der Republik Armenien getragen. Darüber hinaus zahlt die Regierung der Republik Armenien alle bei der KfW anfallenden öffentlichen Abgaben.

Artikel 4

Die Regierung der Republik Armenien überlässt bei den sich aus der Darlehensgewährung und der Gewährung der Finanzierungsbeiträge ergebenden Transporten von Personen und Gütern im See-, Land- und Luftverkehr den Passagieren und Lieferanten die freie Wahl der Verkehrsunternehmen, trifft keine Maßnahmen, welche die gleichberechtigte Beteiligung der Verkehrsunternehmen mit Sitz in der Bundesrepublik Deutschland ausschließen oder erschweren, und erteilt gegebenenfalls in einem nach armenischem Recht vorgeschriebenen Verfahren die für eine Beteiligung dieser Verkehrsunternehmen erforderlichen Genehmigungen.

Artikel 5

Die im Abkommen vom 16. Juni 2015 zwischen der Regierung der Republik Armenien und der Regierung der Bundesrepublik Deutschland über Finanzielle Zusammenarbeit 2014 für das Vorhaben „Energieeffizienz in öffentlichen Schulen“ vorgesehene Begleitmaßnahme, wird mit einem Betrag von 612 528,99 Euro (in Worten: sechshundertzwölftausend fünfhundertachtundzwanzig Euro neunundneunzig Cent) reprogrammiert. Dieser Betrag wird für die in Artikel 1 Absatz 1 Nummer 1 genannte Begleitmaßnahme des Vorhabens „Ausbau erneuerbarer Energien“ verwendet, wenn nach Prüfung deren Förderungswürdigkeit festgestellt worden ist. Der dort genannte Betrag erhöht sich dadurch nicht.

Artikel 6

(1) Dieses Abkommen tritt an dem Tag in Kraft, an dem die Regierung der Republik Armenien der Regierung der Bundesrepublik Deutschland mitgeteilt hat, dass die innerstaatlichen Voraussetzungen für das Inkrafttreten erfüllt sind. Maßgebend ist der Tag des Eingangs der Mitteilung.

(2) Die Registrierung dieses Abkommens beim Sekretariat der Vereinten Nationen nach Artikel 102 der Charta der Vereinten Nationen wird unverzüglich nach seinem Inkrafttreten von der Regierung der Republik Armenien veranlasst. Die andere Vertragspartei wird unter Angabe der VN-Registrierungsnummer von der erfolgten Registrierung unterrichtet, sobald diese vom Sekretariat der Vereinten Nationen bestätigt worden ist.

(3) Jede Vertragspartei kann das Abkommen schriftlich auf diplomatischem Wege kündigen; die Kündigung wird 30 Tage nach Eingang bei der anderen Vertragspartei wirksam.

(4) Änderungen und Ergänzungen in diesem Abkommen können durch Änderungsvereinbarung der Vertragsparteien jederzeit vorgenommen werden. Solche

Vereinbarungen treten in dem in Absatz 1 vorgeschriebenen Verfahren in Kraft.

(5) Streitigkeiten über die Auslegung oder Anwendung dieses Abkommens werden durch die Vertragsparteien gütlich im Rahmen von Gesprächen beziehungsweise Verhandlungen beigelegt.

Geschehen zu Eriwan am 7. April 2020..... in zwei
Urschriften, jede in armenischer und deutscher Sprache, wobei jeder Text gleichermaßen
verbindlich ist.

Für die Regierung der
Republik Armenien
Deutschland



Für die Regierung der
Bundesrepublik

